Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՈՐԵՐՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԽԻ ԷԹՆՈ-ԼԵԽԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԿԵՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿՅԱՆՔ ԵՎ ԱՑԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՑԱՐՅԱՆ

Ռոբերտ Քոչարյան

Կյանք և ազատություն

Հայաստանի և Ղարաբաղի էքս-նախագահի ինքնակենսագրությունը

Գիրքը ստեղծվել է
Իրինա Աբրամովայի
մասնակցությամբ

Երևան
2019

ՀՏԴ 323(479.25):325.8:93/94
ԳՄԴ 66.3(5Հ)+63.3
Ք 822

Ռուսերենից թարգմանեց
Ա. Ասլանյանը
Խմբագիր՝ Ա. Ավագյան
Սրբագրիչ՝ Ա. Բաբայան

Քոչարյան Ռ.
Ք 822 Կյանք և ազատություն: Հայաստանի և Ղարաբաղի էքս-նախագահի ինքնակենսագրությունը/ Ռոբերտ Քոչարյան.-Եր.: Հեղ. հրատ., 2019. — 560 էջ, ներդիր 16 էջ:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին նախագահի գիրքը լույս է սփռում հայ ժողովրդի նորագույն պատմության ամենաբարդ էջերի վրա: Ձեր առաջ Հայաստանի և Ղարաբաղի կարևորագույն իրադարձությունների անմիջական մասնակցի հուշերն են: Գրքում տեղ են գտել մինչ օրս չհրապարակված տեղեկություններ և նախկինում գաղտնագրված փաստաթղթեր, ինչպեսև պատմական լուսանկարներ Ռոբերտ Քոչարյանի արխիվից:

ՀՏԴ 323(479.25):325.8:93/94
ԳՄԴ 66.3(5Հ)+63.3

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Գրքի ոչ մի հատված չի կարող վերարտադրվել որևէ ձևով և միջոցով, այդ թվում՝ համացանցում և կազմակերպությունների ներքին ցանցերում, ինչպեսև արգելվում է գրառումը համակարգիչներում անհատական կամ հրապարակային օգտագործման նպատակով՝ առանց հեղինակի գրավոր թույլտվության:

ISBN 978-9939-0-2957-3

© Քոչարյան Ռ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 7

ՄԱՍ Ի. ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔ 11

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ 13

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ 21

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԱԿ 27

ԳԼՈՒԽ 4. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՆ 33

Լիմիտչիկը 33
Ցնցում 38
Նորից ուսանող 41
Վերադարձ Ղարաբաղ 43
Կոմերիտմիություն 45

ՄԱՍ II. ՂԱՐԱԲԱՂ 55

ԳԼՈՒԽ 5. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ 56

Ստորագրահավաք Հայաստանի հետ վերամիավորման համար 56
Խաղաղ ցույցեր 61
Դիմակայություն 68
Սումգայիթ 69

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԵՄԻՆ 71

Պատրանքների վախճանը 71
Արկադի Վոլսկին ու նրա կոմիտեն 81
«Միացում» 86

Անվտանգությունը՝ հարցականի տակ 89

ԳԼՈՒԽ 7. ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 98
Պատժիչները 98
Բարեկամներ ու թշնամիներ 104
«Օղակ» գործողությունը 116

ԳԼՈՒԽ 8. ԷՅՖՈՐԻԱՅԻ և ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋև 119
Միջնորդները 119
Հանրաքվե 127
Սովետական զորքերի դուրսբերումը 128
Կյանքը կրակի տակ 133
Խորհրդարանական ընտրություններ 138
Ինքնապաշտպանության կոմիտեն 143
Խոջալուի գրոհը 149
Եղբայրս 157
Շուշիի գրավումը 161
Շրջափակման ճեղքումը 171
Կորցնում ենք Ղարաբաղը 176

ԳԼՈՒԽ 9. ԲԵԿՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ 186
Առաջին հաջողությունները 190
Քելբաջար 198
Աղդամ 211
Գաղտնի հանդիպում Հեյդար Ալիևի հետ 216
Անպտուղ բանակցություններ 219
Վլադիմիր Կազիմիրով 224
Պրիմակովն ու գերիների փոխանակումը 227
Արկադի Ղուկասյան 230
Զինադադար, որ խաղաղություն դարձավ 231

ԳԼՈՒԽ 10. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ 239

ՄԱՍ III. ՀԱՅԱՍՏԱՆ 253

ԳԼՈՒԽ 11. ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 255
Նոր մարտահրավեր 255
Կառավարության ղեկավար 263

Տեր-Պետրոսյանի հրաժարականը 273
1998 թվականի նախագահական ընտրությունները 293

ԳԼՈՒԽ 12. ԴՈՒՐՍ ԵՆՔ ԳԱԼԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՐԱՄԱՏՆԵՐԻՑ 306
Տնտեսության սուր խնդիրների լուծումը 306
Քաղաքական ուժերի համախմբում:
Խորհրդարանական ընտրություններ 320

ԳԼՈՒԽ 13. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 331
Առավոտ 331
Աղետ 332
Ահաբեկիչների զինաթափման գործողությունը 334
Կուլիսներում 346
Ահաբեկչական գործողության
քաղաքական հետևանքները 349

ԳԼՈՒԽ 14. ԽՈՐՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ 361
Կառավարության կոնսոլիդացում 361
Համակարգային փոփոխություններ 363
Ոչ միայն տնտեսությամբ 367

ԳԼՈՒԽ 15. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՄԵԿ ՔԱՅԼԻ ՎՐԱ 373
Հանդիպումներ Հեյդար Ալիևի հետ 373
Քի Ուեսթ. խաղաղության
համաձայնագիր, որը չստորագրվեց 381
Իլհամ Ալիև 388

ԳԼՈՒԽ 16. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐ
..... 391
Կրկին ընտրություններ 391
Կոալիցիոն կառավարություն 402

ԳԼՈՒԽ 17. ՈՐԱԿԱԿԱՆ ԹՌԻՉՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ .. 406
Ծրագրեր 406
Քըրք Քըրքորյան 411
Հյուսիսային պողոտա 415
Աղետի գոտի 420
Օդանավակայանը, գինեգործությունը
և Էդուարդո Էռնեկյանը 428

Ծաղկաձոր 434
Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը 437

ԳԼՈՒԽ 18. ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 447
Սահմանադրական բարեփոխումներ 447
Կառավարական կոալիցիայի վերաձևում 451

ԳԼՈՒԽ 19. ՇԱՀԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ 458
Մի քիչ ԱՄՆ-ի մասին 458
Ռուսաստանի հետ
հարաբերությունները. Վլադիմիր Պուտին 464
Հարաբերությունները Թուրքիայի հետ 471
Եկեղեցու և կրոնի հետ հարաբերությունները 476

ԳԼՈՒԽ 20. ԿԵՆՍԱԿԵՐՊ ԵՎ ԱՇԽԱՏԱՌՃ 481

ԳԼՈՒԽ 21. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԳԻՏԱԿՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ
..... 490
Մերժ Սարգսյանն ու ՀՀԿ-ն 492
Հետնորդի ընտրություն 493

ԳԼՈՒԽ 22. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 497
Տեր-Պետրոսյանի վերադարձի փորձը 497
Դիմակայություն Թատերական հրապարակում 503
Բախում 513
Ողբերգության քննությունն ու պատճառները 521

ԳԼՈՒԽ 23. ՈՒՐԻՇ ԿՅԱՆՔ 526
Բարձրաձայն մտքեր 526
Հետնախազահական ռեաբիլիտացիա 528

P.S. 539

P.P.S 542

Ծանոթագրություն 546

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 555

Նախաբան

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ ՍՍՀՄ փլուզման կանխանշաններից մեկը դարձավ: Թուլացող կենտրոնական իշխանությունը ակնհայտորեն չէր կարողանում լուծել տնտեսական խնդիրները, իսկ «վերակառուցումն ու գլասնոստը» աղետալի արագությամբ ավերեցին երկրի կառավարման համակարգը: Իշխանությունն անկարող եղավ որևէ նոր, գրավիչ ու համախմբող բան առաջարկելու հասարակությանը: Երկիրը, որի կառավարման սկզբունքը գերկենտրոնացումն էր, և որը ամրակցված էր գաղափարախոսությամբ, սրընթաց կորցնում էր ուղենիշերը: Չնայած դրան՝ սպառնալիքը Սովետական Միության ամբողջականությանը իրական ու անշրջելի դարձավ միայն այն ժամանակ, երբ ճեղքվածքն սկսեց անցնել ամենախոցելի տեղով՝ ըստ էթնիկական հատկանիշի:

Այդ դրամատիկ ժամանակներում ես հայտնվեցի հայ-ադրբեջանական հակամարտության էպիկենտրոնում ու դարձա գլխավոր գործող անձերից մեկը: Հանրահավաքներ, գործադուլներ, արտակարգ դրություն, պարետային ժամ, զինված կազմավորումներ, էթնիկական բախումներ, բախումներ զորքերի հետ, պատերազմ. այս բոլոր իրադարձությունները Սովետական Միությունում առաջին անգամ տեղի էին ունենում Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը: Կյանքը ցույց տվեց, որ մեզ մոտ՝ Ղարաբաղում, այլ ընտրություն չկար. մենք ամեն գնով պաշտպանում էինք նախնիների հողի վրա ապրելու մեր իրավունքը: Լինելով կուսակցական աշխատող՝ ես անմիջապես դարձա Ղարաբաղյան շարժման ղեկավարներից մեկը, զբաղվում էի ինչպես քաղաքական բաղադրիչով, այնպես էլ զինված ընդհատակի՝ ԼՂՀ ապագա Պաշտպանության բանակի հիմնադրմամբ: 1992 թվականի ամառը, երբ ադրբեջանական զորքերը

բռնազավթել էին Ղարաբաղի կեսը, մեզ համար ամենաողբերգականն էր: Շատ վտանգավոր իրավիճակ էր ստեղծվել, և ես ճգնաժամային կառավարման մոդել առաջարկեցի, որը համարժեք էր մեզ վրա կախված՝ Ղարաբաղի կորստի սպառնալիքին: Պատասխանատվությունը վերցրի ինձ վրա, ստեղծեցի ու գլխավորեցի Պետական պաշտպանության կոմիտեն՝ Հանրապետության իշխանության բարձրագույն մարմինը՝ արտակարգ լիազորություններով: Հաջողությունն ապշեցուցիչ էր: Երկու տարուց պակաս ժամանակում մեզ ոչ միայն հաջողվեց վերադարձնել ամբողջ Ղարաբաղի վերահսկողությունը, այլև շուրջը հուսալի պաշտպանական գոտի ստեղծել:

Պատերազմից անմիջապես հետո ինձ ընտրեցին Լեռնային Ղարաբաղի առաջին նախագահ: Սակայն 1997 թվականին ճակատագրի անսպասելի շրջադարձ եղավ, ու ես նախ դարձա Հայաստանի վարչապետ, ապա նախագահ՝ երկրի զարգացման վճռորոշ փուլում: Հակամարտություն գործող նախագահի հետ, որը հարուցեց նրա հրաժարականը, արտահերթ ընտրություններ, երկիրը ցնցած խորհրդարանի ահաբեկչական գործողություն... Չափազանց ծանր տարիներ էին ինչպես ճգնաժամերի հաղթահարման, այնպես էլ ստեղծարար աշխատանքի և արդյունավետ բարեփոխումների համար, որոնք մեծապես փոխեցին Հայաստանի նկարագիրը: Իմ նախագահության տասը տարիների ընթացքում Հայաստանի ՀՆԱ-ն աճեց հի՛նգ անգամ: Բարեբախտություն ունեցա որպես վարչապետ ու նախագահ աշխատել երկու երկրներում՝ ճանաչված ու չճանաչված, ընդ որում՝ նրանց կայացման՝ իրադարձություններով ամենից հարուստ տարիներին: Այնպես որ պատմելու բան իսկապես ունեմ:

Գիրք գրելու մտադրություն չունեի, թեև հասկանում էի, որ իմ կենսագրությունը հազվագյուտ է և հնարավոր է՝ հետաքրքիր լինի: Պարզապես չէի մտածում, թե երբևէ կփորձեմ պատմել իմ անցած ճանապարհի մասին: Օրագիր պահելու սովորություն չեմ ունեցել, հուշերի գիրկն ընկնել չէի սիրում, հին ալբոմներ չէի թերթում. մի խոսքով՝ չէի խրվում-մնում անցյալի մեջ: Միշտ զբաղված եմ եղել գործով, առաջ եմ նայել և ապագայի պլաններ կառուցել: Պաշտոնաթող լինելուց անմիջապես հետո շատերն էին համոզում, որ անպայման

զբաղվեմ հուշագրությամբ, բայց ես դրա անհրաժեշտությունը չէի զգում: Առաջին անգամ գրքի մասին մտածեցի Հայաստանից դուրս երկու հանդիպումներից հետո: Այդ հանդիպումներին հրավիրվել էի որպես բանախոս, և հաճելիորեն զարմացրեց ու ոգևորեց լսարանի հետաքրքրությունն այն իրադարձությունների հանդեպ, որոնց մասին պատմում էի: Հանդիպման շատ մասնակիցներ հարցնում էին, թե ինչու մինչ օրս գիրք չեմ գրել, չէ՞ որ շատ հետաքրքիր կլիներ: Սակայն վերջնական որոշում կայացրի, երբ «Սիստեմա» ԲՖԿ-ի ռազմավարական նստաշրջանի ընթացքում Ալթայում ծանոթացա Մարկ Ռոզինի[1] հետ: Որպես ընկերության տնօրենների խորհրդի անկախ անդամի՝ ինձնից հարցազրույց վերցնելուց հետո Մարկը խոսեց գրքի մասին և հորդորեց, որ անպայման գրեմ: Այդ ժամանակ էլ մտածեցի, որ իսկապես արժե մարդկանց ներկայացնել իմ կյանքի պատմությունը:

Խոստովանեմ, երբ սկսեցի գրել, շատ փոշմանեցի որոշմանս համար: Բայց նահանջելու համար արդեն ուշ էր. կյանքում երբեք ու ոչինչ կիսատ չեմ թողել: Անցյալի, հատկապես ղարաբաղյան շրջանի մեջ խորանալը ծանր փորձություն դարձավ: Շատ բան արդեն անհուսալիորեն մոռացված էր թվում: Հարկ եղավ վերընթերցել բոլոր նախկին հարցազրույցներս, նայել պահպանված տեսագրությունները, բազմաթիվ հանդիպումներ ունենալ այդ տարիների իրադարձությունների մասնակիցների հետ: Ապշելու բան է, թե հիշողության խորքերից ինչպես հանկարծ սկսեցին դուրս լողալ կենդանի պատկերներն այն ամենի, որ շատ վաղուց էր եղել: Նույնիսկ մարդկանց դեմքերը, որոնց գոյությունը, թվում էր, մոռացել եմ, նրանց անուններն ու նրանց հետ կապված ապրումներս: Ես ամբողջ կյանքում հետևողականորեն ու բավական հաջող ինձ վարժեցրել եմ վերահսկելու հույզերս: Գիրքը գրելիս վերստին սովորում էի ազատություն տալ նրանց, և դա հիշողության խորքերում թաղված կերպարները կենդանացնելու լավագույն միջոցն էր:

Ուզում էի, որ գիրքը հետաքրքիր լինի, ոչ թե պարզապես նկարագրի պատմական իրադարձությունները, որոնց մասնակցել եմ: Ուզում էի ցույց տալ պատմության հենքն ու նրան հյուսած մեր թելը, պատմել, թե ինչու էինք վարվում այս կամ այն կերպ, ինչն էր մեզ

անհանգստացնում, ինչն էր խանգարում, և ինչն էր օգնում ու ոգևորում: Առաջին անգամ բացահայտել մեր նորագույն պատմության ամենադրամատիկ հատվածների անդրկուլիսյան մանրամասները:

Սկզբում մտածում էի գրել այն ամենի մասին, որ կատարվել է այդ զարմանալի տարիներին, նաև տալ նրանց անունները, ում հետ ծանրագույն ճանապարհ եմ անցել ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում: Սակայն փաստերի առատությունից գիրքը կորցնում էր դինամիկան, դառնում էր չափազանց ծանրաբեռնված, ակադեմիական ու դժվարընթեռնելի: Արդյունքում որոշեցի պատմել միայն ամենակարևոր իրադարձությունների մասին, որոնց մասնակցել էի:

Շնորհակալ եմ բոլորին, ում հետ աշխատել, շփվել ու ընկերություն եմ արել, և ներողություն եմ խնդրում նրանցից, ում անունները չեն նշվել գրքում:

ՄԱՍ I

ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔ

ԳԼՈՒԽ 1

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ծնվել ու մեծացել եմ Ստեփանակերտում, որ փոքրիկ քաղաք էր Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի կենտրոնում: Երբ մտովի վերադառնում եմ մանկություն, հիշում եմ լեռների գրկում ամբողջ աշխարհից թաքնված մաքուր, կանաչ ու խնամված մեր քաղաքը:

Ասում են՝ իր հետ կատարվածից երկու տարի անց մարդ շատ բան մոռանում է, բացի ամենալավից կամ ամենավատից: Միակ մանկական ողբերգությունը, որ մինչ օրս հիշում եմ, մեր շան մահն է. Ջուլբարսը մեքենայի տակ էր ընկել: Մնացած հիշողություններս պատված են հեքիաթային ջերմությամբ, իսկ հիշողությունս բազում վառ և ուրախ պատկերներ է պահպանում:

Շատ լավ հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ լողացի: Վեց տարեկան էի: Ես ու եղբայրս լողում էինք մեր տնից ոչ հեռու փոքրիկ լճում, սկզբում թպրտում էի ափի մոտ, հետո, ինձ համար էլ աննկատ, հասա խորքը, որտեղ ոտքերս գետնին չէին հասնում: Հանկարծ զգում եմ, որ ջուրը գրկում ու պահում է ինձ, ձեռքերով շարժումներ եմ անում ու, իհարկե շնալողով, բայց լողո՛ւմ եմ: Նույն ամռանը սովորեցի երկանիվ հեծանիվ քշել, ու դա էլ հեշտ ստացվեց, ինքն իրեն. գնացի՛նք, և ահա, տղերքի հետ պանում եմ փոշոտ ճանապարհով: Հավասարակշռություն պահելու ունակությունն ու արագության կիրքը պահպանեցի ամբողջ կյանքում:

Մինչ օրս ամենայն մանրամասնությամբ հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ Սև ծով գնացի՝ ամբողջ ընտանիքով, մեր «Մոսկվիչով»: Գիշերում էինք հենց ափին, վրաններում, կայանատեղիներում: Եվ, իհարկե, ամենատպավորիչը ծովն էր: Մեր լեռնային գետակներից հետո ծովն այնքան տաք էր թվում, որ մեզ

ջրից չէին կարողանում հանել: Այդ ժամանակ սուզվել սովորեցի ու վատ չէի լողում ջրի տակ՝ փողրակավոր դիմակով:

Երեխաների կյանքն այդ տարիներին դրսում էր անցնում: Ամռանը շուտ էինք զարթնում, վազում գետի ափ ու ամբողջ օրն անցկացնում այնտեղ. լողում էինք, ձուկ բռնում, խաղում: Մեր խաղերից շատերն այսօր ոչ ոք չի հիշում, դրանք վաղուց չկան: Շատ էի սիրում արշավները ու հաճախ, վրանը վերցնելով, ընկերներիս կամ եղբորս հետ գնում էի սարերը: Մեր նշանավոր Շուշիի կիրճն անգիր էի արել. գիտեի բոլոր կածաններն ու մեկուսի վայրերը, պրպտել էի բոլոր քարանձավներն ու սարերում հանգիստ կարող էի գիշերել նաև առանց վրանի:

Ձմռանը գլխավոր զբաղմունքը չմուշկներն ու դահուկներն էին: Ո՛նց էինք ուրախանում ընկերներով, երբ ձյուն էր գալիս: Լեռնադահուկներ այն ժամանակ, իհարկե, ոչ մեկը չուներ, զինվորական լայն դահուկներ էինք վերցնում, ոտքերը կապելու հարմարանքներ հորինում ու բարձունք գտնելով՝ սլանում ցած:

Ձյուն շատ էր գալիս, երկար ժամանակ չէր հալվում, ու քաղաքի փողոցները վերածվում էին համատարած սահադաշտի. այն ժամանակ աղ չէին լցնում: Քաղաքային ավտոբուսների անիվներին, որպեսզի չսահեն, շղթաներ էին փաթաթում: Մինչ ավտոբուսը փնչացնելով կբարձրանար քաղաքի վերևի մասը, տղերքով, չմուշկներ հագած, կախվում էինք հետևից, իսկ հետո ցած սղողում փողոցներով: Իմ մանկության չմուշկները՝ «Ձյունիկները», շատ էին տարբերվում հիմիկվաններից. պարզապես երկու պողպատե սահակող, որ թոկերով կապվում էին սովորական ձմեռային կոշիկներին:

Մեր ընտանիքն ապրում էր քարաշեն տան մեջ, որ դեռ պապս էր կառուցել: Հիշում եմ՝ ինչպես էինք ամեն ամառ կարմրաներկով ներկում թիթեղյա տանիքը, որ չժանգոտի: Տունը մի քանի անգամ վերակառուցվել էր. սկզբում միայն մի փոքրիկ սենյակ էր, հետո ժամանակի հետ կամաց-կամաց մեծացավ. երկու սենյակ ավելացավ, ծածկապատշգամբ ու նկուղ: Մինչ օրս պարզ տեսնում եմ պատերին կախված հին լուսանկարները. պապս, տատս, նախատատս: Ինձ՝ երեխայիս, տունն ահռելի էր թվում: Շատ տարիներ անց տեսնելով՝ զարմացա. պարզվում է՝ ի՛նչ փոքր է եղել: Պատերազմի ժամանակ

տունն անվնաս էր մնացել, իսկ հետո քանդեցին. բոլորովին վերջերս այդ տեղում շինարարություն տեսա: Այգին էլ չկար, որ դեռ պապս էր սկսել տնկել:

Այգին հորս մեծ ուրախությունն ու հպարտությունն էր: Անվանի գյուղատնտես էր նա և իր գործը շատ էր սիրում: Երեք հսկա թթենիները համարյա կպած էին տանը, ու մենք երեխաներով ամբողջ օրը մագլցում էինք այդ ծառերի վրա: Եվ, իհարկե, քաղցր, հասած թութ էինք ուտում: Մեծերը թթից դոշաբ էին եփում: Նաև օղի քաշում: Մինչ օրս եթե օղի խմում եմ, ապա սովորաբար՝ թթի: Վեց հոգով էինք ապրում. ծնողներս, տատիկս, Վալերա եղբայրս, ես ու մեր քույր Իվետտան՝ հորս դուստրը առաջին ամուսնությունից, որն այն ժամանակ ուսանող էր: Բուհից հետո մնացել էր աշխատելու Հայաստանում, իսկ հետո տեղափոխվեց Մոսկվա, ամուսնացավ:

Ես ու Վալերան մեր սենյակն ունեինք. մի սենյակ՝ երկուսիս: Տարիքի տարբերությունը մեծ չէր՝ ընդամենը երկու տարի: Երեխա ժամանակ իրար հետ հաճախ էինք կռվում. անհեթեթ բաներից, իհարկե. ես, որ փոքրն էի, համառում էի, ոչ մի հարցում չէի ուզում զիջել եղբորս: Իսկ հետո Վալերան հանկարծ աճեց, բոյ քաշեց, թափ առավ, հասունացավ, զգաց իր ուժը, և այդ ժամանակ մեր հարաբերությունները փոխվեցին: Կռիվներն ավարտվեցին, ու սկսվեց ընկերությունը, որը շարունակվեց ամբողջ կյանքում:

Մենք նաև մեր ընտանեկան գաղտնիքներն ունեինք: Դրանցից մեկը՝ հորս պատմությունը, իմացա, երբ արդեն մեծ էի:

Պապս ընտանիքով Բաքվում էր ապրել: Երբ 1918 թվին թուրքերը մտել էին Բաքու, ու սկսվել էին հայկական ջարդերը, հայրս կորել էր: Ութամյա տղան փախչողների բազմության հետ հայտնվել էր լաստանավի վրա ու Կասպից ծովով հասել Միջին Ասիա: Հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, անիշխանություն, ամենուր՝ անկարգություններ, բայց պապիկս ու տատիկս, աղջիկների հետ, փրկվել ու կարողացել էին հասնել Ղարաբաղ: Իսկ հայրս երկար անապաստան դեգերել ու, ի վերջո, հայտնի չէ՝ ինչպես, հայտնվել էր Տաշքենդում: Եվ այնտեղ բախտը բերել էր. նրան ու իր պես անապաստանների օթևան էր տվել մի հարուստ հայ: Երեխաները

աշխատում էին նրա համար, իսկ հայը նրանց կերակրում էր, նույնիսկ դպրոց էր ուղարկել: Մի խոսքով, փրկել էր երեխաներին:

Տատիկս այդ բոլոր տարիներին որդուն գտնելու հույսը չէր կորցրել: Երկրում աստիճանաբար վերականգնվում էր կարգուկանոնը, սկսել էր աշխատել փոստը: Ու տատիս եղբայրը, որ կարևոր մարդ էր դարձել միլիցիայում՝ ղեկավարում էր բանդիտիզմի դեմ պայքարի բաժանմունքը, կարողացել էր Տաշքենդում գտնել վեց տարի առաջ կորած երեխային ու բերել Ստեփանակերտ: Հայրս այդ ժամանակ արդեն տասնչորս տարեկան էր: Տատիկս ամաչում էր կատարվածից՝ ինչպե՞ս կարող էր կորցնել տղային, ու հորս արգելել էր պատմել այդ մասին: Ոչ ոք չգիտեր: Չնայած՝ այդ պատմության արձագանքները, իհարկե, մեկ այստեղից, մեկ այնտեղից լսվում էին: Օրինակ՝ ամեն տարի Տաշքենդից մեզ հյուր էր գալիս հորս մտերիմ ընկերը: «Ի՞նչ ընկեր: Որտեղի՞ց Տաշքենդում ընկեր»: Հայրս չէր պատասխանում, ու միայն հետո պարզվեց, որ երեխա ժամանակ միասին աշխատել են այն նույն հայի մոտ:

Մի գաղտնիք էլ պապիս էր վերաբերում:

Ես նրան չեմ տեսել. մինչև իմ ծնվելն է մահացել: Մի անգամ, լրիվ պատահական, գյուղում մի մարդու հանդիպեցի, որն ասաց, թե լավ գիտի պապիս՝ դերանց* Սարգսին: Հարցրի՝ ինչո՞ւ է պապիս «դերանց» ասում: «Ո՛նց,- ասում է,- պապդ մեր շրջանի վերջին քահանան է եղել»: Երբ պապս, ջարդերից փրկվելով, վերադառնում է Ղարաբաղ, նրան, որպես գրաճանաչ մարդու, առաջարկում են քահանա դառնալ. գրագետ մարդիկ այն ժամանակ հազվագյուտ էին: Պապս համաձայնել էր ու սպասավորել մինչև 20-ական թվականների վերջը, մինչև կփակեին վերջին եկեղեցին: Իսկ հայրս երդվյալ կոմունիստ էր, բայց երկար ժամանակ կուսակցության մեջ չէին ընդունում. ծագումն այն չէր: Հայրս ծանր էր տանում ու նույնիսկ շատ տարիներ անց մեզ հետ դժկամությամբ էր քննարկում այդ թեման:

Հորական տատս աչքի էր ընկնում խիստ բնավորությամբ. չեմ հիշում, որ երբևէ ժպտար: Քահանայի այրի լինելով՝ տատս Աստծուն չէր հավատում: Ես ու եղբայրս երբեմն հոգու հետ խաղում էինք. «Տատի՛, բա մեզ դպրոցում ասում են, որ Աստված կա»: Նա միայն

* Դեր՝ քահանա, տերտեր բառից՝ Ղարաբաղի բարբառով:

ձեռքն էր թափ տալիս ու խնդրում հիմարություններ դուրս չտանք: Չնայած տատիկը երբեք չէր պատժում ինձ ու եղբորս, անխոս ենթարկվում էինք, ըստ երևույթին՝ զգալով նրա ներքին ուժն ու խստությունը: Տատս երեք երեխա ուներ. մեծը որդին էր՝ հայրս, ու երկու դուստր: Մի աղջկա ամուսինը զոհվել էր Հայրենական պատերազմում, ու նա որդու հետ Բաքվում էր ապրում, իսկ փոքրը ընտանիքով Ստեփանակերտում՝ մեզնից ոչ հեռու: Շատ շուտ ու անսպասելի մահացավ, երբ ես արդեն ծառայում էի բանակում, իսկ նրա մահվանից ուղիղ մի տարի անց տատիկս մեծ քանակությամբ քնաբեր խմեց. ուզում էր ինքնասպան լինել: Երբ տատիկին ուշքի էին բերել, բացատրել էր. «Ես իմ աղջկանից երկար չպիտի ապրեի»: Մեր ընտանիքում մեծերը երբեք չէին վիճում, երեխաների վրա ձայն չէին բարձրացնում: Մայրս սկեսուրի հետ հաշտ էր ապրում: Գուցե երեխաների բացակայությա՞մբ էին հարաբերություններ պարզում: Կարծում եմ՝ ոչ. մեր կյանքը ոչնչով չէր մռայլվում: Տան հոգսը ամբողջովին մորս ուսերին էր: Կամային, չափավոր խիստ ու գործնական՝ նա էր սահմանում տան ներքին կարգուկանոնը, վարում ընտանեկան հաշիվներն ու զբաղվում մեր դաստիարակությամբ: Նրա վրա էր երեխաների կրթությանը վերաբերող ամեն ինչի պատասխանատվությունը: Եղբայրս, հիշում եմ, առավոտները դժվար էր վեր կենում: Ես մինչև զարթուցիչի զանգն արդեն արթնացած էի լինում, իսկ Վալերային ստիպված էին երկար քաշքշել: Մայրիկն արթնացնում է, իսկ եղբայրս, քունը գլխին, փնթփնթում է. «Լավ, էլի՛, մա՛մ, մի րոպե էլ... մի վայրկյան...»: Այ, այստեղ մայրիկի ձայնի մեջ կարող էին և խիստ երանգներ հայտնվել:

Մորս հետ իմ վեճերի հիմնական պատճառը երաժշտության պարապմունքներն էին: Նրա հեռու զարմիկը լավ ջութակ էր նվագում, ու մայրս երազում էր, որ ես էլ նվագել սովորեմ: Առաջին դասարանում ուղարկեց երաժշտական դպրոց, իսկ ես ահավոր ամաչում էի ու սկսեցի ատել ջութակը: Երբ պատյանը ձեռքիս անցնում էի փողոցով, ականջներս վառվում էին, ուզում էի գետնի տակն անցնել: Երկու տարի տառապեցի, երրորդին գտա լուծումը: Տնից դուրս եմ գալիս իբր պարապմունքի գնալու, բայց աննկատ, որ անցորդները չտեսնեն, ջութակը պահում եմ շիմշատի թփերում ու

վազում տղերքի հետ ֆուտբոլ խաղալու: Խաղում-վերջացնում եմ, վերցնում ջութակը ու հանգիստ գալիս եմ տուն: Մի երկու ամիս այդպես փախա երաժշտությունից, մինչև ուսուցչուհին զանգեց ծնողներիս: Այստեղ իմ գաղտնիքը բացվեց, ու տանը սարսափելի սկանդալ պայթեց: Մայրս ուզում էր ինձ վերադարձնել դպրոց, բայց ես հրաժարվեցի: Կտրականապես: Արդեն սովորել էի դիմադրել: Մայրիկը զիջեց, բայց անցավ եղբորս: Վալերային դաշնամուրի տվեց: Նա թողեց դաշնամուրը: Այդ ժամանակ մայրս նրան խնդրեց զբաղվել կլառնետով. նույն պատմությունը: Մի խոսքով, մայրս չէր հանձնվում, մենք՝ նույնպես, ու մեզնից այդպես էլ երաժիշտ դուրս չեկավ...

Բայց և այնպես, ընտանիքում գլխավորը հայրս էր: Հիշում եմ՝ աշխատանքից ուշ էր գալիս տուն ու հաճախ գնում էր գործուղումների: Հայրս ոգևորված էր գյուղատնտեսությամբ ու դրա պատասխանատուն էր ամբողջ մարզի մասշտաբով. Ղարաբաղում խաղողագործության զարգացման հաջողությունը նրա վաստակն էր: Բացի դրանից՝ երկար տարիներ մարզգործկոմի նախագահի տեղակալի պաշտոնին էր և իր աներևակայելի զբաղվածությամբ հանդերձ՝ հասցնում էր գիտական աշխատանք կատարել: Թեկնածուական թեզ պաշտպանելուց հետո մնաց մեր քաղաքում, ինչը բավական անսովոր էր այն ժամանակների համար. մարդիկ գիտական աստիճան ստանալով՝ առավել հաճախ մեկնում էին մայրաքաղաք՝ Երևան կամ Բաքու: Իսկ հայրս հավատում էր, որ ինքը պետք է այստեղ՝ Լեռնային Ղարաբաղում: Եվ մեր լեռներում նա՝ գյուղատնտեսը, քաղաք-այգի էր հիմնում, կոմունիզմ կառուցում, որի գաղափարներին հավատաց ամբողջ կյանքում:

Զբաղվածության պատճառով հայրս միշտ չէ, որ կարողանում էր զբաղվել ինձանով, բայց ձգտում էր տալ գլխավորը, որը, իմ կարծիքով, պետք է կարողանա ցանկացած տղամարդ: Հիշում եմ՝ ինչպես սովորեցրեց մեքենա վարել: Մի հին «Մոսկվիչ» ունեինք, կարծեմ՝ 403 մակնիշի, կլորավուն: Այդ ժամանակ տասներեքս էր լրացել, ու բարձրահասակ չէի: Հայրս նստեցրեց ղեկի մոտ ու ասում է. «Ոտնակին հասցնում ե՞ս»:- «Հասցնում եմ»:- «Ճամփան տեսնում ե՞ս»:- «Տեսնում եմ»:- «Դե քշի՛»: Ու ես քշեցի:

Հայրս էր, որ առաջին անգամ զենք տվեց ձեռքս. միփողանի, ողորկափող հրացան: Սկզբում նրբատախտակի կամ ստվարաթղթի

վրա նկարած ինքնաշեն թիրախների վրա էինք կրակում, հետո որսի գնացինք սարերը: Հիշում եմ՝ ինչքան հպարտ էի, երբ առաջին անգամ կաքավ խփեցի: Հայրս շուտով թույլ տվեց՝ ինքնուրույն զենք օգտագործեմ, իսկ հետո ընդհանրապես տվեց ինձ: Մեր բակի տղաներից ոչ մեկը դեռ զենք չուներ: Տղերքով հավաքվում և այդ հրացանով,- մեկը՝ բոլորին,- գնում էինք սարերը՝ որսի:

Ես ռուսական դպրոցում էի սովորում ու լավ էի սովորում: Կարևոր չէր՝ առարկան դուր էր գալիս թե ոչ, բայց անպատրաստ դասի գնալն աներևակայելի էր: Չէի կարող պատկերացնել ավելի մեծ խայտառակություն, քան գրատախտակի մոտ անօգնական կանգնելը՝ չիմանալով ինչ պատասխանեմ: Ընդհանրապես արագաշարժ ու կարգապահ էի. դպրոցից եկար, արագ արեցիր դասերդ ու ազատ ես: Մաթեմատիկան, ֆիզիկան հեշտ էին տրվում, սիրում էի աշխարհագրությունն ու գրականությունը: Լեզուների հարցն ավելի դժվար էր. շարադրություն հեշտ էի գրում, բայց սխալնե՛րը... Ու միայն երկու առարկա չէին ձգում ընդհանրապես՝ հայերենն ու անգլերենը: Ու կյանքը, ասես դիտմամբ, ստիպեց դրանք սովորել արդեն հասուն տարիքում: Արդեն Հայաստանի վարչապետ դառնալով՝ ո՛նց էի փոշմանում, որ հաճախ բաց էի թողնում հայերենի դասերը: Դպրոցում չէի հասկանում, որ այդպես պետք է գալու. մեր ղարաբաղյան բարբառը շատ է տարբերվում գրական հայերենից, ու Հայաստանում այն դժվար են հասկանում:

Մեր կյանքի կենտրոնը բակն էր:

Մեր տունը մեծ, բազմաբնակարան շենքի կողքին էր, որի ընդարձակ բակում ամեն երեկո հավաքվում էին հարևանները՝ մեծեր, ծերեր, երեխաներ: Բոլորն իրար լավ ճանաչում էին ու ազատ ժամանակը միասին էին անցկացնում, մեկ ընտանիքի պես: Հիշում եմ տաղավարը բակի մեջտեղում, ուր մեծերն անդադար նարդի ու շախմատ էին խաղում՝ իրար ձեռ առնելով, իսկ մենք՝ երեխաներս, վազվզում էինք շուրջը: Հիշում եմ, թե ինչպես էր մեկնումեկի սուր կատակից հետո տաղավարը պայթում միահամուռ քրքիջից, և այդ քրքիջը, շենքի պատերից արձագանքվելով, հասնում էր բակի ամենահեռավոր անկյունները: Ու քանի որ բոլորն անընդհատ ձեռ էին առնում բոլորին, ծիծաղն էլ ոչ մի րոպե չէր դադարում: Մի խոսքով, բակում բարեկամական և ուրախ մթնոլորտ էր:

Մեր բակը էլիտար էր համարվում: Մեծ շենքում ապրում էին մարզային միլիցիայի պետը, ժողովրդական վերահսկողությանպետն ու կուսակցության մարզկոմի մի քանի աշխատակից: Ընդհանուր առմամբ՝ ինտելիգենտ ժողովուրդ էր հավաքվել. գիրք էին կարդում, սպորտով զբաղվում: Հարևանությամբ դպրոցն էր՝ մարզադաշտով, ու մենք այնտեղ ֆուտբոլ, բասկետբոլ, ձեռքի գնդակ էինք խաղում, որն այն ժամանակ մեծ հեղինակություն էր վայելում: Իհարկե, պատահում էր նաև, որ խաղալիս իրար հետ լեզու չէինք գտնում, վիճում էինք, կռվում, բայց այդպիսի դեպքերը չէին խանգարում մեր ընկերությանը: Մի փողոց ներքև խուլիգանական բակեր կային, ու այնտեղի տղաները երբեմն գալիս էին մեզ մոտ ֆուտբոլ խաղալու. մեկ հաշտ ու խաղաղ խաղում էինք, մեկ՝ բակերով կռվում: Բայց լուրջ բախումներ չէին լինում. պարզապես ուժի ու տաքարյունության ավելցուկից երբեմն բռունցք էինք ճոճում իրար վրա:

Մի խոսքով, մանկությունս անամպ ու երջանիկ է եղել, ինչպես և իմ հասակակից ղարաբաղցիների մեծ մասի մանկությունը: Գուցեև կանխակալ եմ, բայց հիմա էլ համոզված եմ, որ մեր մարզը յուրահատուկ էր: Շուրջը՝ և՛ Ադրբեջանում, և՛ Հայաստանում, և՛ ամբողջ Կովկասում, ծաղկում էր կաշառակերությունը, հեղինակություն էին վայելում օրենքով գողերը: Իսկ Ղարաբաղը օրինականության ու կարգուկանոնի օազիս էր, «կաշառք» բառը որպես ամենասարսափելի վիրավորանք էր ընդունվում, ու մարդիկ լրջորեն մտածում էին, որ կոմունիզմ են կառուցում: Ըստ երևույթին, համընդհանուր հավասարության ու եղբայրության գաղափարը համահունչ էր ավանդական արժեքներին, որոնցով դաստիարակվել էին ղարաբաղցիների բազում սերունդներ, ու կատարյալ հասարակության երազանքն արմատ էր գցել մեր հողում: Լեռնային Ղարաբաղի բնակիչները՝ օրինահարգ սովետական քաղաքացիներ, անկեղծորեն հավատում էին պայծառ ապագային:

Այդպես էլ ապրում էինք՝ պարզ ու հանգիստ, ու թվում էր՝ ոչ մի ցնցում չի վրդովի մեր խաղաղ ու մեկուսի եզերքը, միայն սերունդները կփոխարինեն սերունդներին:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍԱՆՈՂ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Տասներորդ դասարանում հաստատ գիտեի հաջորդ քայլս՝ գնալու եմ Մոսկվա՝ տեխնիկական բուհ ընդունվելու: Հետոն չէի մտածում. մնացած ամբողջ կյանքը թվում էր մաքուր էջ, որի վրա կարելի է գրել ցանկացած պատմություն: Տեխնիկական բուհ էի ընտրել, որովհետև բնագիտական առարկաներն ինձ շատ ավելի էին դուր գալիս, քան հասարակագիտականները: Մոսկվան՝ որովհետև Ստեփանակերտի միակ ինստիտուտը մանկավարժական էր, իսկ ես ընդհանրապես չէի դիտարկում այդ տարբերակը: Լավ կրթություն ստանալու համար Ստեփանակերտի տղաները առավել հաճախ գնում էին Երևան կամ Մոսկվա: Այլ երկիր ուսման մեկնելն անհնար էր. սահմանները փակ էին, լավագույն կրթությունը Մոսկվայում էր, ուրեմն՝ դեպի Մոսկվա: Տասներորդ դասարանի դպրոցական քննությունները գերազանց հանձնելով՝ հավաքեցի ճամպրուկս ու մեկնեցի մայրաքաղաք: Մոսկվայում ինձ դիմավորեց քույրս. նա և ամուսինը ապրում էին Ռեուտովում: Քննությունների ընթացքում նրանց մոտ էի մնալու: Հաջորդ օրը գնացի փաստաթղթերս հանձնելու Մոսկվայի Էներգետիկայի ինստիտուտ, տեսնեմ՝ ինստիտուտի շուրջը բոլոր պյուները ծածկված են հայտարարություններով՝ կրկնուսույցներն իրենց ծառայությունն էին առաջարկում: Պարզվում է՝ մոսկվացիները լրիվ ուրիշ պատրաստություն էին ստանում: Մեզ մոտ նույնիսկ այդպիսի բառ չկար՝ «կրկնուսո՛ւյց»: Համարվում էր, որ դպրոցում լավ սովորելն արդեն բավարար է: Ուրեմն պետք է պակասը լրացնել: Մինչև քննությունները դեռ ժամանակ կար: Մաթեմատիկայի կրկնուսույց գտա, պայմանավորվեցի ու գլխովին թաղվեցի պարապմունքների մեջ: Այնպես որ, մոսկովյան կյանքիս առաջին շաբաթը որպես շուրջօրյա պարապմունքի մղձավանջ եմ հիշում:

Հակառակ անհանգստությանս՝ վատ չհանձնեցի քննություններն ու ընդունվեցի էներգետիկայի ֆակուլտետ: Զանգեցի հորս: Այն ժամանակ բջջային կապ չկար. ուրիշ քաղաք զանգելու համար պիտի գնայիր փոստատուն, զանգ պատվիրեիր, ընդ որում՝ նախապես հեռախոսավարուհուն ասելով, թե քանի րոպե ես խոսելու, ու նստեիր-սպասեիր, որ միացնեն: Լսելով, որ ուսանող եմ դարձել, հայրս ուրախացավ: Չնայած նրա հատուկ զսպվածությանը՝ զգացի՝ հպարտ է, որ որդին սովորելու է մայրաքաղաքում:

Միայն հիմա առաջին անգամ բարձրացրի գլուխս ու նայեցի շուրջս: Առաջներում արդեն եղել էի Մոսկվայում, յոթերորդ թե ութերորդ դասարանում, բայց շատ կարճ ուղևորություն էր, ու քիչ բան էի հիշում: Իսկ հիմա Մոսկվան իսկապես տպավորեց լեռնային ոչ մեծ քաղաքից եկած տղայիս. այլ մասշտաբներ են, այլ մթնոլորտ, մետրոն՝ իր ստորգետնյա պալատներով, միանգամայն ուրիշ մարդիկ: Ինձ մոլորված չէի զգում. ուրախանում էի, հպարտանում, վայելում ամառը, օրերով շրջում էի քաղաքում, առնում մայրաքաղաքի շունչը: Աշնանը ինստիտուտում սկսվեցին դասերը: Պարզվեց՝ սովորելը շատ ավելի հեշտ էր, քան կարծում էի, բայց և՝ ոչ այնքան գրավիչ: Գուցե այն պատճառով, որ իմ կյանքում մի շատ հետաքրքիր ու կրթված մարդ էր հայտնվել, իսկական քայլող հանրագիտարան՝ քրոջս ամուսինը, Կիմ Գրիգորյանը: Այդպիսի բազմագիտակ մարդու նախկինում չէի հանդիպել և գուցե մինչ օրս էլ չեմ ճանաչում: Կիմն էլ էր ծնունդով Ստեփանակերտից, ավարտել էր Մոսկվայի տեքստիինստիտուտը: Կոնստրուկտորական բյուրո էր ղեկավարում մի խոշոր գործարանում: Ես Լեֆորտովոյի ուսանողական հանրա- կացարանում էի տեղավորվել, բայց համարյա բոլոր կիրակիները Ռեուտովում էի անցկացնում, Կիմի ու քրոջս հետ: Հենց այդ փոքրիկ
բնակարանում էլ սկսվեց իմ ոչ պաշտոնական կրթությունը:

Երեկոները Կիմի հետ նստում էինք խոհանոցում: Արտասովոր բաներ էր պատմում: Ես մեծացել էի մի ընտանիքում, որտեղ սովետական կարգերի արդարությունն ու արդյունավետությունը կասկածից վեր էին: Սովորական սովետական տղա, կոմունիստի որդի՝ ես կարծում էի, որ ապրում եմ աշխարհի ամենալավ երկրում: Եվ ահա, օրը օրին, երեկոյից երեկո Կիմն ինձ ցույց էր տալիս իրականությունը:

Իմացա Ստալինի բռնաճնշումների մասին, իմացա կոլեկտիվացման ընթացքում սովից մահացած միլիոնավոր մարդկանց մասին, իմացա պատերազմից անմիջապես առաջ բանտարկված կարմիր հրամանատարների մասին, իմացա Ստալինի ու Հիտլերի գաղտնի համաձայնության մասին, որով որոշել էին բաժանել Եվրոպան:

Կիմը գործուն այլախոհ չէր. պարզապես շատ սթափ էր մտածում և անզիջում քննադատում էր տիրող կարգերը: Միությունում այն ժամանակ քչերն էին հասկանում, թե իրականում որքան սարսափելի էր Ստալինի ռեժիմը, ու նեխած՝ բրեժնևյան ժամանակը: Կիմը, հանձին ինձ, երախտապարտ ու, երևի, հազվագյուտ ունկնդիր էր գտել ու վրաս էր լցնում այդ ամբողջ ճշմարտությունը: Իսկ խոր գիշերով, տևական զրույցներից հոգնած, խլացուցիչների աղմուկի միջով որսում էինք «Ազատություն» ռադիոն կամ ջազ լսում:

Կիմը նաև գրքեր էր տալիս կարդալու: Ո՛չ «սամիզդատ», այլ քաղաքական, փիլիսոփայական, աստվածաբանական գրականություն, բայց դա էլ էր փոխում գիտակցությունը:

Ամեն ինչ սկսվեց Սպինոզայի «Աստվածաբանական-քաղաքական տրակտատից»: Մինչ այդ նման բան չէի կարդացել: Շատ բարդ էր, բայց ահավոր հետաքրքիր: Այդ գրքից հետո աշխարհը յուրովի բացվեց իմ առաջ, հավատացի, որ միայն բանականության վրա հիմնված ու մարդկանց կողմից կամավոր ընդունված հանրային պայմանագիրն է ունակ սանձելու առանձին անհատի կրքերն ու արատները: Նման գաղափարները ոչ մի կապ չունեին սովետական իրականության հետ, բայց այդ ժամանակ չէի էլ փորձում դրանք կապել իրար, պարզապես յուրացնում էի: Չնայած՝ տասնամյակներ անց, երբ արդեն հետսովետական Հայաստանի նախագահն էի, իմ շատ որոշումների վրա գուցեև աննկատ ազդել է XVII դարում գրված այդ գիրքը, որ կարդացել էի 17 տարեկանում:

Մի անգամ Կիմն ինձ Աստվածաշունչ նվիրեց: Գրպանի փոքրիկ գիրք էր՝ փափուկ կազմով, հազար էջ. ինքնին արդեն փոքրիկ հրաշք: Թռուցիկ կարդացի՝ մինչև վերջ չհասկանալով՝ ինչիս է պետք: Հավատացյալ, իհարկե, չդարձա, բայց գաղափարական հենքը, որն այն ժամանակ կառուցում էին յուրաքանչյուրիս մեջ, երերաց. Աստվածաշունչը կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսից, որ ցանկացած դպրոցի

միջանցքներում որպես «ցուցադրական ագիտացիա» էր կախված, շատ ավելի մարդկային էր թվում:

Չնայած Կիմի հետ զրույցներն ու գրքերը այդ տարի հզոր ցնցում էին ինձ համար՝ փիլիսոփա կամ այլախոհ չդարձա: Ճիշտ է, սովորելու հանդեպ սառեցի. տեխնիկական առարկաները պատասխան չէին տալիս փիլիսոփայական հարցերին, իսկ այդպիսի հարցեր ավելի ու ավելի հաճախ էի ունենում: Զգացողություն ունեի, թե գուցե ճիշտ բուհ չե՞մ ընտրել, բայց շարունակում էի պատրաստվել ու վատ չհանձնեցի առաջին ձմեռային քննաշրջանը: Դրա հետ մեկտեղ հասցնում էի նաև ապրել լիարժեք ուսանողական կյանքով. ընկերներ հայտնվեցին, միասին զբոսնում էինք Մոսկվայում, գնում կինո, սրճարան. սովորելուց շեղող լիքը զվարճանք ու գայթակղություն կար մայրաքաղաքում: Ուսանողների շրջանում, չգիտես ինչու, մեծ հռչակ էր վայելում Կալինինի պողոտայի (հիմա՝ Նոր Արբատ) «Մետելիցան». արշավանքները սրճարան մեծ շքեղություն էին համարվում: Շաբաթ օրերը դիսկոտեկ էինք գնում մեր հանրակացարանում: Այդպիսի դիսկոտեկներից մեկը շրջադարձային եղավ իմ ուսանողական կյանքում:

Մի անգամ՝ մայիսի վերջին, հենց քննաշրջանից առաջ, մի անծանոթ լկտի տղա հայտնվեց դիսկոտեկում: Իրեն հանդուգն էր պահում. կարծում էր՝ ինչ ուզի կանի, ու ակնհայտորեն կռվի էր մղվում: Ես բորբոքվեցի: Ընկերներս փորձեցին ինձ կանգնեցնել, թե՝ ինչ-որ մեկի տղան է, ավելի լավ է՝ գլուխդ ցավի տակ չդնես, հեռու մնա... Ես չմնացի, ու բանն ավարտվեց կռվով: Խփեցի նրան ու, ինչպես պարզվեց, ուժեղ: Ոչինչ չէի վնասել, չէի ջարդել, բայց աչքի տակ մեծ կապտուկ հայտնվեց: Այդ պատմությանը լուրջ նշանակություն չտվեցի. ինչ ասես լինում է, կռիվ կանես, հետո կհանգստանաս, և նույնիսկ կարելի է ընկերանալ:

Մեկ օր անց կանչեցին դեկանատ: Պահանջեցին, որ բացատրություն գրեմ, սպառնացին հեռացումով: Ես փորձում էի արդարանալ. «Ինքը սկսեց...»: Պարզվեց՝ այդ տղան ինստիտուտային ինչ-որ ղեկավարության ազգականն է, դրա համար էլ դիսկոտեկի միջադեպն անսպասելիորեն սրված ուշադրության առարկա էր դարձել: Ինձ անմիջապես չհեռացրին երևի միայն այն պատճառով,

որ չափազանց ակնհայտ էր այդ տղայի մեղքը. լավ խմած էր ու ինքն էր սադրել կռիվը: Բայց պատմությունը ձգվեց, ստիպված էի նորից ու նորից դեկանատ գնալ, ֆակուլտետի ղեկավարության հետ հարաբերությունները շատ վատացան, ու հետաքրքրությունս ուսման հանդեպ, որ առանց այն էլ թուլացել էր, դրա ֆոնին ընդհանրապես մարեց: Ծնողներիս այդ միջադեպի մասին հաստատ պատմել չէի կարող, քրոջս ու Կիմին էլ, չգիտես ինչու, չպատմեցի:

Ի վերջո, դեկանին ասացի, որ կտեղափոխվեմ ուրիշ ինստիտուտ, ու խնդրեցի սեփական ցանկությամբ հեռանալու հնարավորություն տալ: Պայմանավորվեցինք:

Նորից ամառ եկավ, էլի մի հուլիս: Մի տարի առաջ էի եկել Մոսկվա, հանձնել քննությունները, անունս տեսել ընդունվածների ցուցակում ու զանգել հորս, որ ասեմ՝ ուսանող եմ: Հայրս այնպե՛ս էր հպարտանում որդով... Ինստիտուտից հեռանալն ինձ առանձնապես չէր տխրեցրել, բայց անտանելի ամոթ էր, ու երկար ժամանակ հետաձգում էի հորս հետ խոսակցությունը: Հասկանում էի, որ այդ նորությունը նրա համար իսկական ողբերգություն կդառնա:

Բայց այլևս ձգել հնարավոր չէր, ու գնացի փոստատուն:

Հերթապահ աղջկան եմ պարզում մեր տան հեռախոսահամարով թերթիկը, նստում ու սպասում, որ միացնեն: Ժամանակն անտանելի դանդաղ է սողում: Րոպեները ժամ են թվում: Եվ ահա, վերջապես, լսափողի մեջ, խշշոցի ու ճրթճրթոցի միջով լսում եմ հորս հեռավոր ուրախ ձայնը. որդի՛ն է զանգում:

- Պա՛պ, ինստիտուտից դուրս եմ եկել:

Հայրս ապշեց անսպասելի նորությունից:

- Ինչո՞ւ: Ի՞նչ է պատահել:

Տառապագին փորձում եմ պատասխան գտնել. կոնֆլիկտի մասին պատմել չեմ կարող, իսկ սովորել չկարողանալուս հայրս չի հավատա. միշտ գերազանցիկ եմ եղել.

- Չստացվեց: Էլ չեմ ուզում սովորեմ: Բանակ կգնամ:

Հայրս լուռ է: Չգիտի՝ ինչ ասի:

- Կգնամ Խարկով:

Մորս հարազատ եղբայրները Խարկովում էին ապրում: Տուն վերադառնալ չէի կարող. չգիտեի ոնց եմ նայելու հորս աչքերին:

Մի ամիս պարապ թափառեցի Խարկովում ու վերադարձա Ստեփանակերտ: Տեսնում էի, որ հայրս դառնացած է, բայց ոչինչ չհարցրեց: Ես էլ ամեն կերպ խուսափում էի ընդհատված ուսման մասին խոսակցություններից:

Էլեկտրատեխնիկական գործարանում աշխատանքի տեղավորվեցի որպես փականագործ-հավաքող: Հինգ օր աշխատում էի, հանգստյան օրերին ընկերներիս հետ գնում սարերը, հաճախ՝ հրացանով: Աշունը, որ անպատմելի գեղեցիկ է Ղարաբաղում, վառվռուն գույներով էր ներկել սարերը: Երբեմն նույնիսկ որս անել չէի ուզում, որ չխախտեմ տիրող խաղաղությունն ու լռությունը, պարզապես շրջում էի լեռնային կածաններով: Մոսկովյան ուսանողական կյանքը ավելի ու ավելի հեռանում ու կամաց մոռացվում էր:

ԳԼՈՒԽ 3

ԲԱՆԱԿ

Ապագայի որևէ ծրագիր չունեի, սպասում էի զորակոչին: Բոլոր ընկերներս ծանուցագիր էին ստացել նոյեմբերի 9-ի համար, ու ես ուզում էի նրանց հետ գնալ՝ հուսալով, որ միասին կծառայենք: Բայց զինկոմիսարիատում իմ մասին մոռացել էին. չէ՞ որ գնացել էի սովորելու, և, ըստ երևույթին, փաստաթղթերս ճանապարհին ուշացել էին: Ստիպված հորս խնդրեցի, որ օգնի: Հայրս զանգեց զինկոմիսարին, որին լավ էր ճանաչում. էսպես ու էսպես, տղաս շտապ, հենց հիմա ուզում է ծառայության գնա: Զինկոմիսարը շա՛տ էր զարմացել. «Առաջին մարդն եք, որ զանգում է ինձ, որպեսզի որդուն արագ բանակ տանեն: Սովորաբար խնդրում են, որ չտանեն կամ ավելի ուշ տանեն»: Նա կատարեց հորս խնդրանքը, ու նոյեմբերի տոներից անմիջապես հետո գնացի բանակ:

Ընկա երկաթուղային զորքեր, որոնց գոյության մասին նախկինում չէի էլ լսել: Մտածեցի, որ երկաթգծով, երևի, երկրի մի ծայրից մյուսն ենք գնալու՝ զինվորական առաջադրանքներ կատարելով: Բայց պարզվեց, որ պիտի կառուցենք այդ նույն երկաթգիծը, որով ուրիշներն են տեղաշարժվելու: Ճինգումարտակից տարբերությունն այն էր, որ երկաթուղային զորքերում աշխատանքի համար ոչինչ չեն վճարում... Զինվորական ծառայության ռոմանտիկան անմիջապես կորավ:

Սկզբում Չերեպովեցի ուսումնական զորամասն էր: Քաղաքը հիշողությանս մեջ մնաց միայն մետաղաձուլական գործարանի ծխնելույզներով: Մինչև հորիզոնը՝ համատարած ծխնելույզներ, ծխնելույզներ, ծխնելույզներ, և ամեն մեկն իր գույնով է ծխում՝ նարնջագույնից մինչև սև: Ձյուն եկավ, ու հաջորդ օրն արդեն լրիվ գույնզգույն էր՝ ներկված այդ ծխնելույզներից տարածվող մրով:

Զորամասում խմբեր էին հավաքվել տարբեր հանրապետություններից, երկրի տարբեր տարածաշրջաններից: Մենք՝ ղարաբաղցիներս, այնտեղ տասը հոգի էինք, ու նրանց մեջ ընկերներիցս ոչմեկը չկար:

Ուսումնական զորամասն առանձնահատուկ երևույթ է: Նույն զորակոչի շատ տղաներ հայտնվում են անսովոր պայմաններում, ուր պիտի հասկանան ու զգան, թե ինչ է զինվորական ծառայությունը: Այդ ըմբռնումը մասամբ գալիս է իրար ճանաչելու և ներքին ոչ պաշտոնական հիերարխիայի կառուցման ընթացքում, այն է՝ ով է քնելու երկհարկ մահճակալի ներքևի և ով՝ վերևի հարկում, կամ վերակարգի զույգից ով է պատասխանատու զուգարանների մաքրության համար: Զուգարան մաքրել բոլորովին չէի ուզում:

Հենց այստեղ ամբողջ խորությամբ հասկացա Սպինոզայի «Քաղաքական տրակտատի» «բնական իրավունքի» էությունը: Ինքնահաստատման միակ գործիքը բռունցքն էր ու այն գործի դնելու մշտական պատրաստականությունը: Ես լավ մարզավիճակում էի, ազատ ոճի ըմբշամարտով զբաղվելու տարիները շատ տեղին էին, կամքն ու համարձակությունն էլ լիուլի հերիքում էին: Չգիտես որտեղից՝ հանդգնություն ու ագրեսիա հայտնվեցին, որ նախկինում երբեք մեջս չէի նկատել: Շատ շուտով բոլորը սկսեցին ինձ հարգել: Ինտելիգենտ ընտանիքում, խաղաղ քաղաքում, էլիտար բակում մեծացած տղան հանկարծ հայտնվել էր մի իրավիճակում, որտեղ արևի տակ տեղ ունենալու համար դաժան ու անողոք պայքար պիտի մղեր: Ես բախվել էի իրական աշխարհի մի հատվածին, որից պաշտպանված էի մանկության ու պատանեկության տարիներին, և այդ շրջանը կարևոր փուլ դարձավ իմ կայացման համար: Վարքի հմտություններ էի ձեռք բերում անբարյացակամ, երբեմն չափազանց ագրեսիվ միջավայրում: Գուցեև առանց դրանց չկարողանայի հաղթահարել այն փորձությունները, որ ճակատագիրն ինձ համար պատրաստել էր ապագայում:

Ուսումնական զորամասից մեզ նախ ուղարկեցին Պուշկինո՝ Լենինգրադի մոտ, հետո՝ Վոլոգդա: Ամենուր նույն պատմությունն էր՝ փոխադարձ ճանաչում ու ինքնահաստատում, բայց դա արդեն ավելի հեշտ էր տրվում:

Ընդհանրապես, այդպիսի ծառայությունը բանակում դժվար է զինվորական կոչել. ընդամենը մի անգամ եղա հրաձգարանում, ինը փամփուշտ կրակեցի, իսկ մարտական տեխնիկա այդ տարիների ընթացքում չեմ էլ տեսել, միայն տրակտորներ ու ինքնաթափներ: Լենինգրադում երկու ամիս ընդհանրապես ազատ կյանք էի վարում: Առաջին ամիսը երեքով աշխատում էինք Պաշտպանության մինիստրության կցավագոնների նորոգման արհեստանոցներում: Հենց արհեստանոցներում էլ մնում էինք, շատ էինք աշխատում, բայց երեկոները լրիվ ազատ էինք: Այդ ժամանակ ամբողջ Լենինգրադը ման եկա մարզահագուստով: Մեր գլխին ոչ մի պետ չկար, միայն թոշակառու պահակն էր: Մի ամիս էլ Վիբորգին մերձակա զինվորական սովխոզում անցկացրի, որտեղ մենք՝ ութ զինվոր, օգնում էինք գյուղատնտեսական աշխատանքներում՝ մեր զորամասի համար կարտոֆիլ ու բանջարեղեն վաստակելով: Ապրում էինք տեղի ակումբում, ես խմբի ավագն էի. ոչ կանոնադրություն, ոչ շարային քայլ: Այստեղ, ինչպեսև Պուշկինոյում, լարված աշխատում էինք ամբողջ օրը, իսկ երեկոները գնում էինք պարելու հենց այդ ակումբում, ուր մեծ հաջողություն ունեինք տեղի աղջիկների շրջանում:

Վերջին տարին ծառայեցի Մոնղոլիայում՝ Դարխանում ու Էրդենետում: Այնտեղի ծառայությունը շատ էր տարբերվում ստացիոնար զորամասերում իմ տեսածից: Երբ Դարխանից Էրդենետ՝ դեպի Մոնղոլիայի մոլիբդենային հանքավայրերը երկաթգիծ կառուցելու անհրաժեշտություն առաջացավ, ղեկավարությունը կարգադրեց հատուկ գումարտակ կազմավորել այդ առաջադրանքը կատարելու համար: Երկաթուղային զորքերի յուրաքանչյուր ստորաբաժանում իր անձնակազմից, ըստ քվոտայի, մի քանի հոգի պիտի ուղարկեր այդ գումարտակի կազմավորման համար:

Ստորաբաժանումների հրամանատարները իրենց «թրաբլ-մեյքերներից»*՝ մշտապես խնդիրներ առաջացնող զինվորներից ազատվելու համար նրանց լավ բնութագրեր էին տալիս և ուղարկում այդ գումարտակ: Ես այն ժամանակ Վոլոգդայում էի ծառայում, ու ինքս դիմեցի ընդգրկվելու գումարտակում, որի լիդերը ընկերս

* Troublemeker – անկարգ, խռովարար (անգլ.):

էր: Կոլյան Բրյանսկից էր ու գումարտակի հրամանատարի գլխացավանքը: Անտանելի կռվարար, զինվորական կալանատան մշտաբնակ, ընդ որում՝ կարդացած ու խելացի, նա ղեկավարության համբերության բաժակը լցրել էր տարբեր ատյաններ հասցեագրած իր գրագետ բողոքագրերով: Գրում էր անընդհատ, և ամեն բողոքից հետո որևէ հանձնաժողով ստուգման էր գալիս զորամաս: Զորամասի հրամանատարը, իհարկե, կատաղած էր:

Հիշում եմ՝ հերթական ստուգումից հետո, առավոտյան ստուգատեսին, կատաղությունից կարմրատակած հրամանատարն ինչպես էր գոռում շարքի առաջ. «Էստեղ մարդ չունենք՝ փոքրիկ հոդված գրի պատի թերթի համար, իսկ էս խ...-ը մի ամբողջ նամակ է շարադրել, ընդ որում՝ անձամբ մինիստրին»: Կարծում եմ՝ մեր հրամանատարը բոլորից շատ էր ուրախացել եղբայրական Մոնղոլիայում կարևոր երկաթգծի շինարարության համար:

Եվ ահա մեզ՝ նոր գումարտակը, բարձեցին պլացկարտային գնացք, ու տասը օր շարունակ գնում էինք նշանակման վայր: Պատկերացրեք մի գնացք, որտեղ հավաքել են ամենից անհնազանդներին, խմողներին, կատաղիներին, ու ոչ ոք չգիտի՝ ով ինչի է ընդունակ, ով է «սալագա»*, ով՝ «դեդ»**, իսկ առջևում՝ տասը օրվա ճանապարհ: Փոխճանաչումն անմիջապես սկսվեց, այս անգամ՝ գնացքի անիվների թխկթխկոցի տակ: Մեր նոր դասակի հրամանատարին ամբողջ ճամփին միայն երկու անգամ տեսանք՝ գնացք նստելիս ու ժամանելու օրը, արդեն աչքատակի մեծ կապտուկով: Որտեղ էր վաստակել՝ չգիտեմ, բայց երևում էր, որ ամբողջ ճանապարհին դասակի հրամանատարը խմելուց աչք չէր բացել: Պարզվեց, որ սպաներին ու ենթասպաներին էլ են համարյա զինվորների պես ընտրել՝ նրանց, ումից ղեկավարությունն ուզում էր ազատվել: Ճիշտ է, գումարտակի հրամանատար ու քաղղեկ նշանակել էին ուժեղ սպաների, բայց նրանք ստիպված էին լուրջ ջանքեր գործադրել այդ գժանոցը կառավարելի դարձնելու համար:

Տեղակայման վայր հասանք գիշերով: Շուրջբոլորը՝ չոր տափաստան, և այնտեղ պիտի բնակություն հաստատեինք: Վրան-

---

* «Սալագա» (салага՝ ռուս.) - նորակոչիկ սովետական բանակում:

** «Դեդ» (дед՝ ռուս.) - մեկ տարուց ավելի ծառայած զինվոր սովետական բանակում:

ներ խփեցինք: Ամեն ինչ ստիպված էինք սկսել զրոյից՝ և՛ ինքներս կազմակերպեինք աշխատանքները, և՛ տեխնիկա բերեինք, և՛ կենցաղը կարգավորեինք: Շուրջը՝ հարյուրավոր կիլոմետրերով, ոչ մի բնակավայր, կարելի է մեքենայով երեք ժամ անցնել տափաստանով, և առավելագույնը, որ կտեսնես՝ մեկ-երկու յուրտ կամ անասունների հոտ, ուրիշ ոչինչ:

Կյանքի և աշխատանքի այդ բարդ ու խիստ յուրահատուկ պայմաններում մեր գումարտակում միանգամայն այլ, սովորական, ստացիոնար զորամասերից տարբեր հարաբերություններ էին ձևավորվել: Խրախուսանքների ու պատժի համակարգը չէր գործում: Զինվորական կալանատունը հեռու էր՝ Ուլան-Բատորում, գնալու տեղ չկար. շուրջը վայրի բնություն էր: Ամբողջ ժամանցը՝ պտտաձող, զուգափայտեր, մարզագնդերի բարձրացում ու բռնցքամարտի ձեռնոցներ: Սպաների համար դաշտում բիլիարդի սեղան էր դրված, բայց մինչ այն պահը, երբ ավազամրրիկի ժամանակ պտտահողմն դա բարձրացրեց մի հիսուն մետր ու շրխկացրեց գետնին այնպես, որ լրիվ փշուր-փշուր եղավ:

Ներքին հարցերը սովորաբար կանոնադրությամբ չէին լուծվում: Մեր ընկերական եռյակը՝ Գենան՝ Ռիգայից, Կոլյան՝ Բրյանսկից, ու ես, հայտնվեցինք զինվորական հիերարխիայի գագաթին, չնայած բոլորս շարքային էինք: Սպայական կազմի հետ լեզու գտանք. մեր ստորաբաժանումը գերակատարում էր իր առաջադրանքները: Բայց մեզնից անհնար էր դասական կանոնադրային հարաբերություններ պահանջել, ինչպիսիք գործում են, օրինակ, Մոսկվայում կամ Գերմանիայում, որտեղ լավ զորանոցներ կան, կենցաղային պայմաններ, բաղնիք, հստակ օրակարգ, նորմալ սնունդ:

Զորանոց ընդհանրապես չունեինք. ապրում էինք վրաններում:

Մեր զորամասը երկաթուղագծի շինարարության հետ երեք անգամ տեղափոխվեց, որ ավելի մոտ լինի կառուցվող տեղամասերին: Ամեն անգամ հարկ էր լինում նորից տեղավորվել: Զարմանալի գեղեցիկ վայրեր էին: Իմ աչքին անսովոր, չափազանց ինքնատիպ բնապատկերներ. տափաստանով ձգվող զառիկող լեռներն ընդգծում էին կուսական բնության անծայրածիր տարածությունները: Կլիման այդ վայրերում խիստ չորային է, խստաշունչ. ձմռանը՝ մինչև

մինուս երեսունհինգ, ամռանը՝ մինչև քառասուն աստիճան, մայիսին՝ գիշերը, մինուս երեք, ցերեկը՝ պլյուս քսանյոթ: Իսկ մենք՝ երեսուն հոգի, վառարանով ու երկար ծխնելույզով վրանում, որտեղ ձմռանը ներքևի մահճակալին ցուրտ է, վերևի մահճակալին՝ շոգ, ու բոլոր հին ծառայողները երկրորդ հարկում են: Ամռանը միսը մեզ չէր հասնում, փչանում էր ճանապարհին, տափաստանում սառնարաններ չկային: Ամբողջ ամառը պահածոների հույսին չմնալու համար գումարտակի հրամանատարը թույլատրեց ձկնորսների բրիգադ ստեղծել, որի կազմում հայտնվեցի որսորդական հմտություններիս շնորհիվ: Գիշերները ամբողջ զորամասի համար ձուկ էինք որսում Օրխոն ու Սելենգա գետերում, իսկ ցերեկը քնում էինք: Երբեմն այծքաղ էինք խփում՝ տափաստանով մեկ ԳԱԶ-66 մեքենաներով հետապնդելով, չնայած դա չէր խրախուսվում: Այդպես անցավ ամբողջ ամառը:

Բանակն ինձ համար լավ դպրոց դարձավ, որի շնորհիվ անգնահատելի կենսափորձ ձեռք բերեցի ու լրջորեն թրծվեցի:

Ծառայությունից հետո հարաբերությունները բանակային ընկերներիս հետ երկար չտևեցին: Մեր ճանապարհները բաժանվեցին, իսկ տարածության վրա հաղորդակցվելն այդ ժամանակներում, առանց սոցցանցերի ու բջջային կապի, մեծ ջանքեր էր պահանջում:

ԳԼՈՒԽ 4

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՆ

Լիմիտչիկը

Բանակից զորացրվեցի դեկտեմբերի վերջին՝ Նոր տարվա շեմին, ու հենց տոներին հասա տուն: Մինչ այդ, ծառայությունն ավարտելով, արդեն Ստեփանակերտ էին վերադարձել բոլոր տարեկիցներս՝ ընկերներ, համադասարանցիներ, ծանոթներ, բակի նախկին հարևաններ: Համարյա ամեն օր՝ հեռախոսազանգեր: «Հա՛, արդեն էստեղ ե՞ս: Անպայման հանդիպենք»: Ամեն օր՝ հանդիպումներ. մերթ մեկի հետ, մերթ՝ մյուսի, բոլորի հետ էլ ուզում էի տեսնվել: Այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ կյանքումս առաջին անգամ խմելու չափն անցա: Բարեբախտաբար, դա հասկացա, երբ արդեն տանն էի:

Մեկուկես ամիսը ակնթարթի պես թռավ:

Երբ զորացրվածի տրամադրությունը հանդարտվեց, մտածեցի, թե հետո ինչ եմ անելու: Նախ որոշեցի կյանքս դասավորել Մոսկվայում: Մեկնեցի մայրաքաղաք, տեղավորվեցի քրոջս մոտ՝ Ռեուտովում: Գնացի ՄԷԻ ու տեսա, որ այնտեղ ոչինչ չի փոխվել, վերականգնվելու հույս չկա: Ինստիտուտից հույսս կտրած՝ սկսեցի աշխատանք փնտրել: Ինձ նման մարդկանց՝ մայրաքաղաք եկածներին (նրանց այդ ժամանակ տարօրինակ բառով «լիմիտչիկ» էին ասում կամ, քամահրական, «լիմիտա՛»), մոսկովյան գրանցումով գայթակղելով, մեծ եռանդով հրավիրում էին շինարարություն, «Մետրոշին», գործարաններ, այնտեղ, ուր մոսկվացիները դժկամությամբ էին գնում: Մոսկվան արագ կառուցապատվում էր, ու միշտ աշխատող ձեռքի

կարիք կար: Թերթերը լի էին հայտարարություններով. «Պահանջվում են-պահանջվում են-պահանջվում են»:

Շուտով որպես բանվոր ընդունվեցի ԵԲԿ-11*, «Մերպ ի մոլոտ»** կայարանից ոչ հեռու: Գաղափար չունեի, թե ինչ է նշանակում ԵԲԿ. ընտրությունը պատահական էր: Ուզում էի շինարարություն գնալ, բայց քույրս մանրամասն ուսումնասիրեց բոլոր հայտարարություններն ու գտավ իր տնից մոսկովյան չափանիշներով ոչ հեռու այդ ձեռնարկությունը: Կոմբինատը նաև տեղ էր տալիս բնակարանային տիպի հարմարավետ բանվորական հանրակացարանում՝ նորակառույց բարձրահարկում, և այդ հանգամանքը վճռորոշ եղավ:

Այդպես սկսեցի բետոնագործ աշխատել: Երբ ինձ հարցնում են այդ շրջանի մասին, կատակով պատասխանում եմ, որ դրա շնորհիվ Մոսկվայի բանվոր դասակարգի հետ շփվելու մեծ փորձ ու բանվորական հանրակացարանում ապրելու հմտություն ձեռք բերեցի, որտեղ մեծ կամք էր պահանջվում կիրակի օրերը բոլորի պես չհարբելու համար: Չնայած, մնացած առումներով, հարևաններս լավ մարդիկ էին:

Բետոնե սյուներ էինք պատրաստում բարձրահարկ շենքերի համար: Դա աշխատատար գործ է. նախ հատուկ կաղապարի մեջ տեղադրում էինք ապագա սյան ամրանային հենքը, միացնում վիբրատորը ու բետոն լցնում: Հետո կռունկավարն այդ պատրաստուկները տեղափոխում էր չորացման խցիկ: Խցիկները փակվում էին, ու սյունն այնտեղ չորանում էր ամբողջ գիշեր: Հաջորդ օրը սյուները հանում էինք կաղապարներից: Պատրաստի արտադրանքը էլի մի քանի օր չորանում էր ու միայն դրանից հետո ուղարկվում շինհրապարակ:

Բավական ծանր ֆիզիկական աշխատանք էր, բայց պինդ տղա էի, դիմանում էի ծանրաբեռնվածությանը: Բացի դրանից՝ վատ չէին վճարում. ամսական մաքուր երկու հարյուր ռուբլի, ինչն այն տարիներին արժանապատիվ աշխատավարձ էր համարվում: Մենակ էի, առանց ընտանիքի, և այդ փողն ապրելուն միանգամայն հերիքում էր, իսկ կուտակելու կիրք երբեք չեմ ունեցել:

---

* Երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան:

** Ռուս. “Серп и молот” - «Մուրճ և մանգաղ»:

Նովոգիրեևոյի մեր հանրակացարանը էլեկտրագնացքով ընդամենը մի կանգառի վրա էր Ռեուտովից, որտեղ ապրում էին քույրս ու ամուսինը, այնպես որ ճակատագիրն օգնում էր, որ շփումներս Կիմի հետ շարունակվեն: Այդ տարի սպորտով ընդհանրապես չզբաղվեցի. աշխատանքը լրիվ փոխարինում էր մարզումներին: Ասենք, պարապելու տեղ էլ չկար. ի՞նչ սպորտ 70-ականների սկզբի բանվորական հանրակացարանում:

Այդպես աննկատ, հիշողությանս մեջ առանձնակի իրադարձություններ չթողնելով, անցավ տարին: Հիմնականում աշխատում էի, իսկ ազատ ժամանակ զբաղվում էի ինքնակրթությամբ, շատ էի կարդում: Դե, միշտ եմ շատ կարդացել, երեխա ժամանակից, բացառությամբ, թերևս, բանակային շրջանի: Մոնղոլիայում գրադարանը բազմազանությամբ չէր ուրախացնում, բայց այնտեղ էլ կարդացի այն ամենը, որ փոքրիշատե արժանի էր ուշադրության, և դա այն դեպքում, երբ բանակային կյանքը, իհարկե, առանձնապես ընթերցանության չի տրամադրում: Բանտի պես: Արդեն դարաբաղյան հակամարտության ժամանակ ակտիվիստներից մեկը՝ Մուրադ Պետրոսյանը, որ տասը տարի բանտ էր նստել, անընդհատ Լենինից մեջբերումներ էր անում: Մի անգամ հարցրի. «Լսի՛ր, քո կենսագրությամբ, ու հանկարծ մարքսիզմի դասականներին ես մեջբերում»: Իսկ նա պատասխանեց, որ Լենին անգիր գիտի, քանի որ բանտի գրադարանում կարդալու ուրիշ բան չկար:

Ինձ ավելի ու ավելի էր գրավում փիլիսոփայությունը: Մի շնչում կարդում էի սկզբնաղբյուրները, իսկ եթե ձեռքս գեղարվեստական գրականություն էլ էի վերցնում, ապա միայն Անատոլ Ֆրանսի նման հեղինակների, որոնց գործերում փիլիսոփայությունը վարպետորեն ներհյուսված է պատումի հենքում: Կարդացածս երկար քննարկում էինք Կիմի հետ: Հիմա, հիշելով այդ շրջանը, զարմանում եմ ինձ վրա. ինչպե՞ս եմ կարողացել կարդալ այդ ամենը: Ինչպե՞ս եմ հաղթահարել ձանձրալի հեղինակներին, օրինակ՝ Ֆրենսիս Բեկոնին: Բայց այն ժամանակ կարդում էի անդադար, ոգևորված, առանց կտրվելու: Ինչ ասես չէի կարդում. ամեն ինչ, որ հրատարակվում էր, ամեն ինչ, որ հնարավոր էր գտնել:

Շատ դուր եկավ Լամետրին: Գուցեև այնքան էլ խոր չէ, բայց շատ հետաքրքիր լեզու ունի: Իհարկե, կարդում էի դասականներին. Ռուսո, Մոնտեն, Հեգել, Կանտ, Նիցշե՝ ինքնահրատով: Հեգելի ստեղծագործություններից դուր եկավ նրա ամենավաղ գործը՝ «Հիսուսի կյանքն ու ճակատագիրը». հեշտ է ընթերցվում: Մնացածը պարզապես մղձավանջ է: Նրա նախադասություններից մեկը ամբողջ կես էջ է բռնում, դերբայական ու մակբայական դարձվածքներով, ու պիտի ամեն նախադասություն վերընթերցես՝ հասկանալու համար իմաստը, որ հաճախ շատ պարզ է: Հեգելի «Կրոնի փիլիսոփայությունը» հաղթահարեցի, բայց երբ փորձեցի կարդալ «Իրավունքի փիլիսոփայությունը», խրվեցի հենց սկզբում, հնարավոր է՝ լեզվի պատճառով: Գերմանացի փիլիսոփաները մտապահվել են ծանր ոճով. ասես դիտմամբ բարդացրել են լեզուն իրենց հայացքների գիտականությունն ընդգծելու համար: Գուցե իմ բանավոր խոսքի չափից դուրս հակիրճությունը Հեգել կարդալու տառապանքի արձագանքն է:

Կատակում եմ, իհարկե:

Կարդացածիցս շատ բան այն ժամանակ արագ մոռացվում էր: Ես հաճույքի համար էի փիլիսոփայություն կարդում, ոչ թե ուսումնասիրում էի: Բայց համոզված եմ, որ ժամանակն իզուր չեմ ծախսել. այդ զբաղմունքը մտքի լավ վարժանք դարձավ և ազդեց իմ անհատականության վրա: Ինտելեկտուալ զարգացման, մշտապես նոր բան սովորելու մեծ պահանջ էի զգում: Հնարավոր է, որ լարված ինքնակրթությամբ հագեցնում էի գիտելիքների ծարավը, քանի դեռ բուհում չէի սովորում:

Մոսկվայում շատ ընկերներ չունեի: Աշխատանքային կոլեկտիվում որևէ մեկի հետ ընկերություն անել չէր հաջողվում, ասենք՝ չէի էլ կարող: Վատ տղաներ չէին, բայց համարյա բոլորը սիրում էին խմել. աշխատավարձը ստանալուն պես վազում էին կա՛մ զարեջրատուն, կա՛մ խանութ՝ շշի հետևից: Այդպիսի կենսակերպն ընդհանուր ոչինչ չուներ իմ սովորույթների ու կյանքի մասին պատկերացումների հետ: Փոխարենը՝ ծանոթացա ու հեշտությամբ ընկերացա կողքի շենքից մի տղայի հետ: Անունը Դավիդ Վորոնով էր: Խելացի էր, բարեկիրթ, տարիքով ինձնից բավական մեծ, արդեն հասցրել էր ամուսնանալ

ու բաժանվել կնոջից: Շուն պահելու մեծ սիրահար էր ու ոչ պակաս կրքոտ ֆիլատելիստ: Դավիդն անվերջ դրոշմանիշեր էր փոխանակում, վաճառում, գնում. ֆարցովկա էր անում, ինչպես ասում էին այն ժամանակ: Դա կիսալեգալ զբաղմունք էր համարվում, ֆարցովկայի համար կարելի էր բանտ ընկնել: Դավիդն ինձ էլ փորձեց ներքաշել այդ գործի մեջ, նույնիսկ սկսեցի մի քիչ գլուխ հանել դրոշմանիշերից, սակայն բանը պարզ հետաքրքրասիրությունից այն կողմ չանցավ. առևտուրն ինձ բացարձակապես չէր ձգում:

Հենց Դավիդի ու էլի մի տղայի՝ Վալերայի հետ էլ անցկացնում էի ազատ ժամանակս: Ի՞նչ ժամանց էր մատչելի այն ժամանակ: Համարյա ոչ մի. սրճարան գնալ կամ էլ դիսկոտեկ՝ հանգստյան օրերին: Ամռանը քաղաքից դուրս էինք գնում՝ սունկ հավաքելու կամ լողանալու կամ պարզապես անտառում ման գալու, երբեմն ընկերների, երբեմն՝ հարազատների, Կիմի հետ: Գնում էինք, իհարկե, էլեկտրագնացքով, այն ժամանակ մեզնից ոչ մեկը մեքենա չուներ: Այդ ուղևորությունների շնորհիվ շատ գեղեցիկ տեղեր հայտնաբերեցի Մերձմոսկվայում, մանավանդ՝ Գորկիի ուղղությամբ: Մի քանի անգամ ընկերներս հյուր եկան Ստեփանակերտից, Ռիգայում ապրող բանակի ընկերս եկավ, մի առիթով ես էլ այցելեցի նրան. ահա և այդ տարվա կյանքի սովորական ընթացքի շրջանակներից դուրս եկող բոլոր իրադարձությունները:

Մի տարի հետո որոշեցի, որ տուն՝ Ստեփանակերտ վերադառնալու ժամանակն է: Չէի ուզում շարունակել ինձ դուր չեկող աշխատանքը, ապրել ինձ բոլորովին չձգող միջավայրում ու կյանքս լցնել միապաղաղ ու բթացնող սովորականությամբ, որը ոչ մի հեռանկար չէր խոստանում: Գործարանից ինձ դժվարությամբ բաց թողեցին. ըստ երևույթին, լավ համարում ունեի, իսկապես վատ չէի աշխատում: Եվ ընդհանրապես, միշտ լուրջ եմ վերաբերվել այն ամենին, ինչ անում եմ՝ լինի ուսում, աշխատանք թե մարզումներ: Մասնաճյուղի տնօրենը հրավիրեց իր մոտ, փորձեց համոզել. «Գիտե՞ս, քեզ կարող ենք ուրիշ աշխատանքի տեղափոխել՝ եռակցողի, այնտեղ ավելի հեշտ է, և աճի հեռանկարներ էլ կան»: Բայց ես հրաժարվեցի. «Չէ, դուրս գալուս պատճառն այն չէ, որ ծանր աշխատանք է: Պարզապես իմը չէ այս ամենը»:

Ցնցում

Ծնողներս, իհարկե, ուրախ էին վերադառնալուս համար, բայց հասկանում էի, որ չեմ արդարացնում նրանց սպասումները: Նրանք չէին պատկերացնում, որ իրենց երեխաները կարող են հանկարծ բարձրագույն կրթություն չստանալ, ծնողներիս համար դա անվերապահ, պարտադիր բան էր: Ժամանակին, երբ երեխա էի, մայրս դժվարությամբ էր հաշտվել այն մտքի հետ, որ ես ու եղբայրս երաժշտության չգնացինք, իսկ որ որդին կարող է ինստիտուտ չավարտել՝ անպատկերացնելի էր: Թեև ես ուղիղ ասացի, որ հիմա պատրաստ չեմ սովորելու, ու նրանք այլևս չնեղվեցին: Չնայած դա դառնացրել էր հորս, բայց ոչ մի բառ չասաց. վաղուց էր հասկացել, որ ինձ որևէ բան պարտադրելն անիմաստ է:

Իսկ առայժմ... առայժմ վերջապես տանն եմ: Խառնիճաղանջ ու նյարդային Մոսկվայից հետո, որտեղ կյանքի զգալի մասը խժռում է հասարակական տրանսպորտը, ամեն ինչ իմն է, ծանոթ, հարազատ, հանգիստ, իսկ գլխավորը՝ բոլորը կողքիս են: Ընտանիքս, մանկուց հարազատ հին ընկերներս: Որպես էլեկտրիկ աշխատանքի անցա Մետաքսի կոմբինատում, որ Ղարաբաղի ամենախոշոր ձեռնարկությունն էր: Ապրում էի իմ տարիքի բոլոր տղաների պես. ակտիվորեն զբաղվում էի սպորտով, որը միշտ սիրել էի, առաջվա պես շատ էի կարդում, հանդիպում էի ընկերներիս հետ: Հրաշալի ընկերախումբ էր հավաքվել. Յուրան՝ դպրոցական ընկերս, ում հետ նույն սեղանին էինք նստել առաջին դասարանից, Ալբերտը՝ խելացի ու ինտելեկտուալ, եղբորս համադասարանցին ու ես: Մեզ համար հետաքրքիր և ուրախ էր միասին, միշտ գտնում էինք որևէ զբաղմունք, համարյա բոլոր ազատ օրերն անցկացնում էինք բնության գրկում: Ես հաճախ էի որսի գնում, բայց արդեն ուրիշ խմբով կամ եղբորս հետ: Որս անել միշտ եմ սիրել ու լավ գիտեի մեր սարերը վաղ մանկությունից:

Երևի դա կյանքիս ամենահանգիստ ու երջանիկ շրջանն էր: Չէ՞ որ երջանկությունն այն է, երբ հաշտ ես ապրում ինքդ քեզ հետ, ոչ թե փորփրում ես ներսդ՝ ճակատագրի ու կյանքի իմաստի փնտրտուքով: Ինչպես մարդը չի մտածում իր ներքին օրգանների մասին, քանի

դեռ դրանք ցավով չեն հիշեցնում, այնպես էլ հոգեկան հավասարակշռությունն է. երբ կա, պատճառները չես վերլուծում:

Աննկատ թռավ երեք տարի:

Ինստիտուտի մասին պարբերաբար մտքեր էին ծագում, բայց երկար չէին մնում. դրանք վատ էին զուգորդվում իմ հագեցած ու հաճելի կյանքի հետ: Միշտ զբաղված էի. մեկ ընկերներիս հետ մի քանի օրով գնում էինք որսի, մեկ էլի ինչ-որ բան էինք հորինում, ու ես չէի կարողանում ուրիշ բաների անդրադառնալ: «Համենայնդեպս, պետք է ինստիտուտ ընդունվել... Պետք է: Կգնամ, բայց հիմա չէ, ավելի ուշ: Անպայման...»:

Եվ ահա, մի անգամ,- հիշում եմ՝ գարնանն էր,- ծանուցագիր է գալիս զինկոմիսարիատից: Պահանջում են հաջորդ օրը ներկայանալ ինչ-որ հավաքների: Դա ինձ անհանգստացրեց: Զանգում եմ զինկոմիսարիատում աշխատող ծանոթիս, հարցնում եմ՝ ինչ հավաքներ են: Ասում է՝ էդ Ղազախստանի համար են մարդ հավաքում, ինչ-որ բան պիտի տնկեն թե բերք հավաքեն, թե էլի ինչ-որ գործ: Մի խոսքով՝ «խոպան». այդ ժամանակ դա այդպես էր կոչվում: «Երկա՞ր ժամանակով»՝ հարցնում եմ: «Երեք-չորս ամիս»: Օհո՛: Ծրագրել էի ամռանը Սև ծով գնալ, ոչ թե Ղազախստան: Խոպան հերկել հաստատ չէի ուզում, և ընդհանրապես՝ ի՛նչ խոպան: Էլի տափաստա՞ն: Արդեն ազնվորեն ծառայել եմ իմ ծառայելիքը մոնղոլական տափաստաններում:

Բոլոր դասագրքերս կազմուպատրաստ տանն էին. չէ՞ որ անընդհատ պատրաստվում էի սկսել պարապմունքները, բայց ժամանակ չէր լինում: Ծարունակ հետաձգում էի, մտածում էի՝ կհասցնեմ: Իսկ հիմա...

Մի խոսքով, զինկոմիսարիատ չգնացի: Մեկ օրում ազատվեցի աշխատանքից, հավաքեցի իրերս, բոլոր անհրաժեշտ գրքերը տեղավորեցի ճամպրուկում: Զանգեցի եղբորս (այդ ժամանակ Վրաստանում էր ծառայում՝ Ծղալտուբոյից ոչ հեռու). «Բարև,- ասում եմ:- Վերջ, որոշեցի ընդունվել: Դասագրքերով գալիս եմ մոտդ, պիտի պատրաստվեմ»: Իսկ նրան հենց այդ ժամանակ ինչ-որ տեղ գործուղման էին ուղարկում, ասում է. «Համարյա մի ամիս էստեղ չեմ լինելու, արի՛»: Հաջորդ օրն արդեն Վրաստանում էի: Եղբորս

ծառայողական բնակարանը մի մեկուսի ու շատ գեղեցիկ վայրում էր: Տեղ հասա. շուրջս ոչինչ ու ոչ մեկին չեմ ճանաչում, ունեցածս միայն գրքերով ճամպրուկն է ու մի ամիս՝ ընդունելության քննություններին պատրաստվելու համար:

Ինչպե՜ս էի պարապում այնտեղ: Ի՜նչ ոգևորությամբ: Աներևակայելի է: Մտքովս չէր անցնի, որ այդպես կկենտրոնանամ: Արդեն մի քանի օրից այնպես էի խորացել նախապատրաստման ընթացքի մեջ, որ օրեր շարունակ նստած պարապում էի՝ կտրվելով միայն կենսականորեն անհրաժեշտ բաների՝ քնելու և ուտելու համար: Նույնիսկ մաթեմատիկական երազներ էի տեսնում: Դրա համար իդեալական իրավիճակ էր. շուրջս ոչ ոք չկա, միայն զորամաս, բանտ ու թեյի պլանտացիաներ, որտեղ զեկերը* պահակախմբի հսկողությամբ թեյ էին հավաքում: Տնից ոչ հեռու հոսում էր գետակը, և այնտեղ ձուկ էի բռնում ինձ համար: Եղբորս փոքրիկ մոտոցիկլետով գնում էի մթերք առնելու, ինքս էլ եփում էի: Այդպես անցավ մի ամիս: Մի ամիս անց գիտեի, որ պատրաստ եմ քննություններ հանձնելու ցանկացած տեխնիկական ինստիտուտում: Գալ և ընդունվել:

Ընտրեցի Երևանի պոլիտեխնիկականը: Վրաստանից ուղիղ, առանց Ստեփանակերտ մտնելու, գնացի Երևան ու թղթերիս հանձնեցի էլեկտրատեխնիկական ֆակուլտետ: Երկու քննություն պիտի հանձնեի մաթեմատիկայից՝ գրավոր ու բանավոր: Իրականում ընդունելության քննությունները չորսն էին, նաև՝ շարադրություն ու ֆիզիկա, բայց այդ տարիներին ատեստատի 4,5-ից բարձր միջին գնահատականը հնարավորություն էր տալիս քննություններից երկուսը հանձնել: Ընդունվելու համար պահանջվում էր հանրագումարում հավաքել ոչ պակաս, քան ինը միավոր:

Առաջինը գրավոր քննությունն էր: Բացարձակ վստահ էի, որ կհանձնեմ, ամբողջը հեշտ ու արագ լուծեցի, գրեցի ու դուրս եկա, ու հանկարծ՝ չո՜րս եմ ստանում: Ցավալի էր, հիմար սխալ էի արել զուտ անուշադրության պատճառով, շտապել ու նորից չէի ստուգել: Ուրեմն բանավորից հինգ պիտի ստանամ: Գալիս եմ քննության, պատասխանում տոմսի բոլոր հարցերին ու քննող դասախոսին

* Հատուկ ռեժիմի հաստատություններում պատիժը կրող կալանավոր, ռուս. заключенный բառի համառոտագրումից՝ зек:

անմիջապես ասում. «Ինձ միայն հինգ է հարկավոր»: «Ինչո՞ւ»՝ հարցնում է: Բացատրում եմ. «Միջին գնահատականս բարձր է, մտածում էի՝ երկու քննություն հանձնել: Հաջորդը ֆիզիկան է, իսկ ֆիզիկային չեմ պատրաստվել»: Իրականում պատրաստվել էի, իհարկե, բայց քիչ: «Ցանկացած հարց տվեք, քրքրեք ամբողջ նյութը, բայց ինձ հինգ է պետք»: Նա հինգ խնդիր գրեց ու ասաց. «Եթե լուծեցիր՝ հինգ կստանաս»: Նստեցի ու քսան րոպեում հեշտությամբ լուծեցի բոլոր խնդիրները: Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... Քննող դասախոսը արագ նայեց ու ասում է. «Կեցցե՛ս, հի՛նգ»:

Ու ես ընդունվեցի:

Իսկ պատճառը ծանուցագիրն էր... Մինչ օրս հիշում եմ մեր զինկոմի ազգանունը՝ Կուրոչկին: Շնորհակալ եմ այդ Կուրոչկինին, որ ինձ ժամանակին դուրս մղեց սովորական հունից: Երբեմն այդպես է կյանքում. որևէ տհաճ դեպք է պատահում, որը կարծես ոչ մի լավ բան չի խոստանում: Իսկ հետո պարզվում է, որ ցնցել է քեզ, գործի գցել ու տրամադրել վճռական գործողությունների: Կանչը զինկոմի-սարիատ սթափեցրեց ինձ: Հասկացա՝ կյանքս փոխելու ժամանակն է: